

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Մարտի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Մարտի առաջին փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահամաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մարտի 3-6-ին. Տավուշում գրանցվել է +13...+15°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +4...+6°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +19...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Շիրակում՝ +4...+9°C (Գյումրի՝ +11°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +4...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Գեղարքունիքում՝ +2...+7°C, Լոռիում՝ +10...+13°C, Արմավիրում, Արարատում՝ +14...+16°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +2...+5°C, նախալեռններում՝ +8...+12°C (Աշտարակ՝ +14°C):


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են մարտի 1-ին. Տավուշում գրանցվել է -2...-7°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -9...-11°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-6°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ -3...-6°C, նախալեռնային շրջաններում՝ -9...-11°C (Սիսանում՝ -15°C), Շիրակում՝ -7...-12°C (Գյումրի՝ -14°C, Աշոցք՝ -23°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -8...-13°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-6°C, Գեղարքունիքում՝ -7...-12°C (Գավառ՝ -13°C), Լոռիում՝ -3...-8°C (Տաշիր՝ -9°C), Արմավիրում՝ -4...-8°C, Արարատում՝ -6...-8°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -12...-14°C, նախալեռններում՝ -2...-6°C:

Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 4-16մմ (43-160%), Լոռիում՝ 8-13մմ (83-149%), Տավուշում՝ 2-17մմ (22-144%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 7-18մմ (67-109%), նախալեռներում՝ 14-15մմ (179-227%), Գեղարքունիքում՝ 5-14մմ (77-128%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 17-20մմ (87-93%), նախալեռներում՝ 8մմ (81%), Արմավիրում՝ 5-10մմ (77-208%), Արարատում՝ 3-17մմ (65-177%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 27մմ (119%), նախալեռներում՝ 15մմ (123%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 20-21մմ (118-267%), նախալեռներում՝ 13-18մմ (68-220%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են մարտի 1-3-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ -14...-19°C, առանձին լեռնային շրջաններում՝ -20...-25°C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում՝ -8...-12°C, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -3...-8°C:

Մարտի 10-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունն Արագած բ/լ-ում կազմել է 113սմ, Ամբերդում՝ 78սմ, Ջերմուկում՝ 61սմ, Հրազդանում, Անանուն լ/ք՝ 40սմ, Ամասիայում, Սեմյոնովկայում՝ 31սմ, Սրբեփանավանում և Աշոցքում՝ 13-19սմ, մնացած շրջաններում՝ 1-9սմ: Արարատյան դաշտում, Սյունիքի և Տավուշի հովտային շրջաններում ձյան ծածկը բացակայել է:



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Բնության զարթոնքին զուգահեռ հովտային և նախալեռնային շրջաններում սկսել են գյուղատնտեսական աշխատանքները, կատարվել է պողպատների բների փխրեցում, էտ՝ բարելավելով ծառի օդափոխության և լուսավորության պայմանները, կատարվել է խաղողի վազի այգեբաց, դաշտերում՝ վարի աշխատանքներ:

Աշնանացան ցորեն



Հովրային և առանձին նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներից 30-35օր շուտ (փետրվար 6-10) աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվել է:

Հովրային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման, իսկ նախալեռնային շրջաններում՝ թփակալման և ցողունակալման փուլերում:

Բույսի բարձրությունը փասնօրյակի վերջում կազմել է 6-9սմ:

Ինչպես ցույց են տալիս

ագրոօդերևութաբանական մասնագիտացված հաշվարկները (ցանքից մինչև վեգետացիայի վերսկսում), կենսունակության որոշման և ձմռան պայմանների վերլուծության արդյունքումները՝ աշնանացան ցորենի վնասվածությունը ձմռան ավարտին գնահատվել է 4-5%, որը վատ ցուցանիշ չէ ցորենի հետագա աճի և զարգացման համար:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել են 13մմ, 0-20սմ շերտում՝ 30մմ, որը բազմամյա միջին արժեքներից ցածր է 19-25մմ-ով:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը դեռ գտնվել է ձմեռային հանգստի շրջանում: Աշնանացանի թփակալման հանգույցում (հողի 3սմ) վրանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել:

Առանձին լեռնային շրջաններում հողը սառած էր 18-20սմ խորությամբ:

Աշնանացանի ձմեռման համար վրանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել:

Պտղաբույսեր

Արարադյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովրային շրջաններում, ինչպես նաև առանձին նախալեռնային շրջաններում որոշ պտղաբույսերի բողբոջներն ուռչել և բացվել են:



Խտրաբույսեր

Հովրային շրջաններում դիտվել է առվույտի ցողունի աճ, բույսի բարձրությունը կազմել է 6սմ: